Վերապատրաստման դասընթաց «Վարքագծի մասնագիտական էթիկա (դեոնթոլոգիա)» թեմայով

26.11.2026 14:51

Հարգելի՛ փաստաբաններ,

ՀՀ փաստաբանների պալատը, ՀՀ փաստաբանական ակադեմիայի հետ համատեղ, ՀՀ փաստաբանների պալատի դահլիճում՝ 28.11.2026 թվականին **/շաբաթ օր/ ժամը 10:00-ից 12:00-ն, *կազմակերպել է վերապատրաստման դասընթաց «Վարքագծի մասնագիտական էթիկա (դեոնթոլոգիա)» թեմայով,*** հնարավորություն ստեղծելով բոլոր այն գործընկերների համար, ովքեր չեն կարողանում աշխատանքային օրերին լրացնել պարտադիր վերապատրաստում անցնելու դասաժամերը:

Դասընթացը կազմակերպվել է ոչ աշխատանքային օր, հաշվի առնելով աշխատանքային օրերին առկա մասնագիտական ծանրաբեռնվածությունը: Տեղեկացնում ենք նաև, որ **այս դասընթացը նախատեսված էր կազմակերպել ժամը 12:00-ից սկսված**, սակայն տեղի ունեցել ժամային փոփոխություն, խնդրում ենք ուշադրություն դարձնել դասընթացի մեկնարկի ժամին, **այն կայանալու է 10:00-ին**:

Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ մարզերում բնակվող փաստաբանները, ինչպես նաև այն փաստաբանները, ովքեր բնակվում են ՀՀ սահմաններից դուրս, հրավիրված դասընթացին կարող են մասնակցել նաև հեռավար եղանակով, որի մասին գրանցման վերաբերյալ Ձեր նամակում պարտադիր անհրաժեշտ է նշել՝ բնակվելու վայրը և դասընթացի ձևաչափը:

- **Դասընթացը կվարի փաստաբան՝ Արմինե Ֆանյանը,**
- Դասընթացին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել՝ մինչև 27.11.2026թ. ժամը 14:00-ն՝ պատասխան նամակ ուղարկելով training.coordinator@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին, որտեղ անհրաժեշտ է պարտադիր նշել տվյալ դասընթացի թեման, Ձեր անուն, ազգանունը և արտոնագրի համարը, հեռավար մասնակցության դեպքում նաև՝ բնակության վայրը և դասընթացի ձևաչափը,
- 27.11.2026թ. ժամը 14:00-ից հետո և առանց դասընթացի թեմայի, անվան, ազգանվան, արտոնագրի համարի, դասընթացի ձևաչափի, բնակության վայրի նշման, դասընթացին հեռավար մասնակցության համար գրանցումները չեն հաշվարկվելու,
- Դասընթացին մասնակցությունը կհաշվարկվի պարտադիր վերապատրաստման 4 (չորս) ակադեմիական ժամ:

***Ուշադրություն. Հաշվի առնելով հեռավար եղանակով դասընթացներին մասնակցել ցանկացողների թվաքանակը և Google meet հավելվածի միջոցով դասընթացի կազմակերպման** ծանրաբեռնվածությունը, հեռավար եղանակով դասընթացին կարող են մասնակցել առաջին 100 գրանցվողները:*

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })